

Կենսաբանություն, I ՓՈՒԼ
տևողությունը 90 րոպե
11-12-րդ դասարաններ

1. պենիցիլը
2. հաբեդասունկը
3. մուկորը
4. գլխարկավոր սնկերը

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք **միայն մեկը**, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Օնտոգենեզը.

1. տեսակի պատմական զարգացումն է
2. օրգանիզմի հետադանային զարգացումն է
3. օրգանիզմի սաղմնային զարգացումն է
4. օրգանիզմի անհատական զարգացումն է

2. Բազելոլյան հիվանդության պատճառն է.

1. թիրօքսինի սակավությունը
2. ինսուլինի սակավությունը
3. ինսուլինի ավելցուկը
4. թիրօքսինի ավելցուկը

3. Ձկան արտաթորության օրգաններն են.

1. մետանեֆրիդիումները
2. մաշկային գեղձերը
3. իրանային երիկամները
4. կոնքային երիկամները

4. Կաթնասունների աորտայի (զարկերակի) աղեղը դուրս է գալիս.

1. ձախ նախասրտից
2. աջ նախասրտից
3. ձախ փորոքից
4. աջ փորոքից

5. Միկորիզա են առաջացնում .

6. Գետնամուշկերի սպորները առաջանում են.

1. գարնանային ընձյուղների սպորակիր հասկիկներում
2. սորուններում
3. տերևների վրա
4. կողքային ընձյուղների սպորակիր հասկիկներում

7. Լիզոսոմների ֆունկցիաներն (գործառույթներն)են

1. սպիտակուցների և ճարպերի սինթեզը
2. ածխաջրերի սինթեզը
3. բաժանման իլիկի թելերի առաջացումը
4. բջիջ թափանցած սննդային մասնիկների ձեռքումը

8. Ո՞ր օրգանոիդներն ունեն երկմեմբրանային կառուցվածք.

1. միտոքոնդրիումները և ռիբոսոմները
2. լիզոսոմները, Գոլջիի համալիրը և վակուոլները
3. միտոքոնդրիումները և պլաստիդները
4. բջջային կենտրոնը և քլորոպլաստները

9. Պրոկարիոտ բջիջներին բնորոշ են.

1. ձևավորված կորիզ
2. միտոքոնդրիումներ և պլաստիդներ
3. օրգանոիդներ և ներառուկներ
4. նուկլեոիդ, մեզոսոմներ և ռիբոսոմներ

10. ՌՆԹ չի պարունակվում.

1. ռիբոսոմներում
2. կորիզում
3. միտոքոնդրիումներում և պլաստիդներում

4. լիզոսումներում և Գոլջիի համալիրում

11. Ֆոտոսինթեզի լուսային փուլում տեղի է ունենում.

1. ջրի ֆոտոլիզ և ազատ թթվածնի անջատում
2. ՆԱԴՖ-ի օքսիդացում
3. ածխաջրերի սինթեզ
4. գլյուկոզի ճեղքում՝ երկու մոլեկուլ պիրոխաղողաթթվի առաջացմամբ

12. Տրանսլյացիայի ընթացքում ռիբոսոմի ներսում հայտնվում է ի-ՌՆԹի հատված, որն հավասար է .

1. մեկ նուկլեոտիդի
2. 3 նուկլեոտիդների
3. 1 տրիպլետի
4. 2 տրիպլետների

13. Հոդվածոտանիների նախնիներն են.

1. փափկամարմինները
2. կլոր որդերը
3. օղակավոր որդերը
4. տափակ որդերը

14. Մարդու վերին վերջույթների գոտու կազմի մեջ է մտնում.

1. սրունքը
2. բազուկը
3. նախաբազուկը
4. անրակը

15. Մարդու արյան հոսքը անոթներով չի ապահովվում.

1. սրտի աշխատանքով
2. շնչառական շարժումներով
3. ճնշման տարբերությամբ անոթներում
4. կմաղքային մկանների կծկումներով

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Էկոլոգիական բուրգում քանի՞ տոկոս էներգիա է անցնում յուրաքանչյուր սնման մակարդակից հաջորդ սնման մակարդակ:

17.Քանի՞ ոսկրից է բաղկացած մարդու կմաղքը:

18. Քանի՞ քրոմոսոմ կա մարդու գամետներում:

19. Քանի՞ կամբիալ օղակ կա 15-ամյա խնձորենու բնում:

20. Քանի՞ քրոմատիդ է լինում քրոմոսոմում միտոզի ավարտին: